Կ Ա Ր Ծ Ի Ք

Երևանի պետական համալսարանի հայցորդ Սյուզաննա Արմենի Վարդանյանի «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ՝ *ԺԲ.00.02-հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)* ***մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար***

Երևանի պետական համալսարանում գործող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի որոշմամբ կարծիքի ներկայացված Երևանի պետական համալսարանի հայցորդ **Սյուզաննա Արմենի Վարդանյանի** «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերտառությամբ *ԺԲ.00.02–հանրային իրավունք* մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է գիտագործնական արժեք ունեցող այնպիսի հարցադրումների համակողմանի ուսումնասիրությանը, ինչպիսիք են՝ մաքսային ոլորտում կատարված վարչական իրավախախտումների համար վրա հասնող վարչական պատասխանատվության առանձնահատկությունները, իրավախախտման համար պատասխանատվության ենթակա սուբյեկտների այլընտրանքությունը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանը և դրանց հետ անմիջականորեն կապված այլ հարցադրումների պարզաբանումը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հիմնականում փաստարկված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամ դառնալուց հետո ՀՀ-ն վավերացրել է ԵԱՏՄ մաքսային հարաբերությունները կարգավորող համապարփակ նոր կոդիֆիկացված ակտ՝ «Մաքսային Միության մաքսային օրենսգրքի մասին» համաձայնագիրը, որը վավերացնելուց հետո իրավակիրառական պրակտիկայում առաջացրել են բազմաթիվ խնդիրներ, որոնք անհրաժեշտ է ուսումնասիրության առարկա դարձնել թե՛ գործնական և թե՛ նաև տեսական առումով:

Հեղինակին ընդհանուր առմամբ հաջողվել է ուսումնասիրության նյութ դարձնել ընտրված թեմային անմիջականորեն առնչվող հարցադրումները, իսկ թեմայի արդիականությունը պայմանավորված է ընտրված հարցերի երբեմն հրատապությամբ և դրանց գիտագործնական նշանակությամբ:

Հեղինակի կողմից իրականացված ուսումնասիրության առանցքն են կազմել առհասարակ մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության ինստիտուտը, դրա սահմանման վերաբերյալ տեսական տարբեր մոտեցումները, ինչպես նաև Հայաստանի Հան-

ռապետությունում կիրառված Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերը: Հատկապես, ինչպես արդեն վերը նշվել է, առանձնակի տեղ է գրավում մաքսային հարաբերությունները կարգավորող համապարփակ նոր կոդիֆիկացված ակտը՝ «Մաքսային Միության մաքսային օրենսգրքի մասին» համաձայնագիրը:

Ուշագրավ է, որ նշված առանցքային հարցադրումները Հեղինակն ուսումնասիրության առարկա է դարձրել ինչպես վերը թվարկված միջազգային-իրավական փաստաթղթերի, այնպես էլ ներպետական օրենսդրության կարգավորումների զուգակցմամբ:

Բացի այդ, չնայած ատենախոսության թեման առավելապես վերաբերում է մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության իրավական կարգավորումներին, այնուամենայնիվ Հեղինակը չի խուսափել հավելյալ արձանագրելու քննարկվող ոլորտում առկա մյուս իրավակարգավորման խնդիրները և ըստ այդմ՝ բանաձևել այդ առնչությամբ վերջինիս դիտանկյունից ընդունելի համարժեք լուծումները:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական փաստաթղթերից, որոնք անշուշտ էլ ավելի են հարստացրել ատենախոսության բովանդակությունը, մասնավորապես ատենախոսության շարադրանքում օգտագործվել են հայրենական և ռուսական իրավունքի իրավաբանական գրականություն:

Պաշտպանության ներկայացվող եզրահանգումներն ու դրույթներն ունեն որոշակի չափով բավարար և գիտական հիմնավորվածություն և կարող են նշանակություն ունենալ մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ ձևավորված մոտեցումների ինչպես զարգացման, այնպես էլ ՀՀ գործող օրենսդրության համարժեք կատարելագործման տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ, գտնում ենք, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև Հեղինակի որոշ ինքնատիպ դատողություններով: Ընդ որում, ատենախոսությունը շարադրված է պատշաճ գրական հայերենով, աչքի է ընկնում նաև ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ: Հեղինակի կողմից մեծամասամբ պահպանվել են աշխատանքի ձևավորման պահանջները, ինչի արդյունքում վրիպակներ և խմբագրական այլ թերությունները հասցված են նվազագույնի:

Ընդհանուր առմամբ, Հեղինակին հաջողվել է ապահովել ատենախոսության մեջ շա-

ռադրված պաշտպանությանը ներկայացվող դրույթների միջև ներքին համակարգային կապը: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ աշխատանքը զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հանգում են հետևյալին.

1. Կարծում ենք, որ պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթը իրենում ըստ էության գիտական նորույթ չի պարունակում, ավելին, մերժելով իրավակարգավորման այն մոդելը, ըստ որի, մաքսային կանոնի խախտման վերաբերյալ վարույթի նկատմամբ առավելապես կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթները, իսկ ըստ Հեղինակի՝ անհրաժեշտ է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում նախատեսել առանձին գլուխ, մեր գնահատմամբ, միևնույն է այդպիսի փոփոխությունները բովանդակային առումով որևէ դրական ազդեցություն ունենալ չեն կարող:

2.Ատենախոսության 61-62-րդ էջերում Հեղինակը անդրադառնալով իրավաբանական անձանց որպես մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության սուբյեկտի, հարկ է նկատել, որ շարադրված նույնանման դատողություններն արտացոլված են նաև Թամարա Շաքարյանի «Իրավաբանական անձը որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ» վերտառությամբ դեռևս 2013 թվականին հրատարակված մենագրության մեջ, մինչդեռ հեղինակի կողմից որևէ հղում այդ աշխատանքին չի կատարվել: Ավելին, աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե ատենախոսը հղում կատարելով այդ մենագրությանը, միաժամանակ ներկայացներ այն ձեռքբերումներն ու զարգացումները, որոնք այս տարիների ընթացքում վերափոխվել են և ի վերջո, Հեղինակն ինչպիսի նոր առաջարկներով է հանդես գալիս:

3. Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարույթի էական առանձնահատկություններին անդրադառնալիս, մեր կարծիքով, աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսը մանրամասն վերլուծության ենթարկեր նշված կանոնների խախտման գործերով վարույթի ժամկետների հարցը, քանի որ ի տարբերություն մյուս այլ իրավախախտումների, մաքսային ոլորտում վարչական իրավախախտումների ժամկետները հաշվարկվում են այլ մեթոդաբանությամբ և օժտված են որոշակի առանձնահատկությամբ:

4. Աշխատանքում կան նաև տեխնիկական բնույթի որոշ թերություններ, մասնավորապես՝ օգտագործված գրականության ցանկում շարադրված աշխատությունների էջերը նշված չեն:

Չնայած հիշյալ դատողություններին՝ դրանք ամենևին չեն ստվերում աշխատանքում արված վերլուծությունների և եզրահանգումների գիտական արժեքը, չեն հավակնում կաս-

կածի տակ դնելու ատենախոսություններին ներկայացվող պահանջներին սույն աշխատության համապատասխանության փաստը:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ կարծիքի ներկայացված ատենախոսությունը բավարարում է համանման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Այսպիսով, ամփոփելով Սյուզաննա Արմենի Վարդանյանի «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերտառությամբ *ԺԲ.00.02 – հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)* մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեկնածուական թեզի վերաբերյալ մեր նկատառումները, այդուհանդերձ կարող ենք արձանագրել, որ այն համապատասխանում է սահմանված պահանջներին, իսկ Սյուզաննա Վարդանյանն արժանի է հայցվող մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական
իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական
գիտությունների թեկնածու՝

ՌՈՒՍՏԱՄ ՄԱԽՄՈՒԴՅԱՆ

17-ը նոյեմբերի 2025թ.
ք. Երևան

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուստամ Մախմուդյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ՝ ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ